ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՓԱԹԵԹ (ՊՈՐՏՖՈԼԻՈ)

(ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

ԻՋԵՎԱՆ - 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ՊՈՐՏՖՈԼԻՈՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՆՐԱ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 4
ԲԱԺԻՆ 1. ՆԱԽՔԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՍԿՍՎԵԼԸ ՀԱՎԱՔԱԳՐՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 5
Հավելված 1. Փաթեթի տիտղոսաթերթ 9
Հավելված 2. Տեղեկատվություն դասավանդողի մասին 10
Հավելված 3. Տեղեկատվություն պարտադիր և երաշխավորվող դասավանդման և ուսումնառության նյութերի վերաբերյալ 11
Հավելված 4. Դասընթացի ուսումնամեթոդական փաթեթը 12
1. Մասնագիտական ամբիոնի երաշխավորությունը 12
2. Դասընթացի համառոտ նկարագիրը 13
3. Դասընթացի ներածությունը, նպատակներն ու խնդիրները 14
4. Դասընթացի ավարտին ակնկալվող վերջնարդյունքները 15
5. Դասընթացի գնահատման չափանիշները, գործիքները և ընթացակարգերը 16
6. Դասընթացի դասավանդման և ուսումնառության ձևերն ու մեթոդները 17
7. Կրթական վերջնարդյունքների ձևավորման քարտեզը 18
8. Դասընթացի թեմատիկ պլանը 19
9. Դասընթացի օրացուցային պլանը /ըստ պարապմունքի տիպերի/ 20
10. Դասընթացի գնահատման գործիքների նմուշները 21
Հավելված 5. Նախագիծ 22
Գծապատկեր 1. Եզրափակիչ գնահատումով դասընթացի գնահատումը 24
Գծապատկեր 2. Առանց եզրափակիչ գնահատման դասընթացի գնահատումը 25
Գծապատկեր 3. Ստուգարքով ավարտվող դասընթացի գնահատումը 26
Հավելված 6. Դասընթացի գնահատման հարցաթերթ 27

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր բուհի նպատակն է ունենալ արդյունավետ ուսումնական ծրագրեր և ստեղծել ուսումնական այնպիսի միջավայր, որտեղ ուսանողները կարող են զարգացնել իրենց մասնագիտական գիտելիքները, քննադատական և վերլուծական մտածողությունը և խնդիրներ լուծելու հմտությունները, զգալ իրենց առաջընթացը՝ ստացած գիտելիքների վերլուծության, սինթեզի և գնահատման միջոցով, կապել տեսությունն ու պրակտիկան գիտելիքների և հմտությունների գործնական կիրառության հետ, կառուցել համագործակցային հարաբերություններ իրենց հասակակիցների և դասավանդողների միջև:

Սույն ուղեցույցը հնարավորություն է տալիս դասավանդողներին իրենց փորձի և գործընկերներից փորձի փոխանակման հիման վրա լավ պլանավորել և իրականացնել դասընթացը, գնահատել դասընթացից ձեռքբերումները և բարելավել այն:

Ուղեցույցի նպատակն է ԵՊՀ ԻՄ դասախոսական կազմին ներկայացնել **դասընթացների փաթեթների** /պորտֆոլիոների/ բովանդակությունը, դասավանդողներին տրամադրել գործնական խորհուրդներ այդ փաթեթների ձևավորման համար:

Պորտֆոլիոն (ֆրանս. porter-շարադրել, ձևակերպել, ներդնել և folio- թուղթ, էջ) որոշակի ժամանակահատվածում գործունեության և ձեռքբերումների հավաքածու է: Այն կրթական գործընթացում կիրառվող ժամանակակից տեխնոլոգիա է:

Պորտֆոլիոյի ձևավորումը նախատեսում է փաստաթղթերի համակարգված և կազմակերպված հավաքագրում, որը ծառայում է դասախոսին որպես սեփական գործունեության անդրադարձի /ռեֆլեքսիայի/ միջոց և նրա արդյունքների ներկայացումը՝ որպես կոմպետենտության ընթացիկ գնահատման կամ շուկա դուրս գալու մրցունակության ցուցադրման միջոց: Այն կիսամյակի ավարտին արտացոլում է դասախոսի և ուսանողների գործունեությունը, ներկայացնում ամրագրված մեխանիզմները, առանձնացնում դրանցից արդյունավետները, կամ նշում նրանք, որոնք իրենց չեն արդարացրել: Դասընթացի պորտֆոլիները միջոց են.

- կանխելու դասավանդման արդյունավետ ձևերի և մեթոդների կորուստը,
- ընդհանրացնելու և համակարգելու մանկավարժական լավագույն փորձը,
- հաջողությունների ու ձախողումների վերլուծության արդյունքում կատարելու հետագա գործունեության նորովի պլանավորում:

Պորտֆոլիոյի հավաքագրումն անընդհատ (սիստեմատիկ) գործընթաց է, և նրա մեջ ընդգրկված փաստաթղթերը պետք լինեն.

- ✓ ամբողջական, հստակ և օբյեկտիվ,
- ✓ վերլուծական (անալիտիկ),
- ✓ համակարգված,
- ✓ հակիրճ (լակոնիկ),
- ✓ պատշաճ ձևավորված,
- ✓ հիմնավորված:

Դասընթացի ամբողջ փաթեթն ինքնակազմակերպման, ինքնաճանաչման, ինքնագնահատման, ինքնազարգացման և ինքնաներկայացման գործիք է, ձեռքբերումների և դժվարությունների հաղթահարման գնահատում և պլանավորում: Այն գործունեության վերաբերյալ յուրօրինակ հաշվետվություն է, որը ցույց է տալիս, թե ինչպես է դասավանդողը

մտածում, անալիզ անում, սինթեզում, վերլուծում և ինտելեկտուալ մակարդակի վրա փոխհարաբերություններ ստեղծում ուսանողների և կոլեգաների հետ:

Դասընթացի փաթեթը պետք է բացահայտի դասախոսի հետաքրքրությունները.

- ուսանողների արդյունավետ ուսումնառությունն ապահովելու համար ժամանակակից մեթոդների ներմուծման նրա ձգտումը,
- ուսանողների ուսումնառության արդյունքների և ուսումնական ծրագրի լիարժեք իրականացման գնահատումը,
- ուսուցման արդյունավետ ռազմավարությունների մշակումը,
- ուսանողներին գիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների նպատակային կիրառման մեջ հնարավորինս ընդգրկելու, պահելու և հիմնավորելու ուղղությամբ մոտեցումների մշակումը,
- ուսանողների ստեղծագործական մտքի զարգացմանը, ուսանողական գրագետ և կազմակերպված միջավայրի ձևավորմանն ու առաջընթացին նպաստելը:

Ամփոփ փաթեթը դասավանդողին հնարավորություն կտա խուսափել նախորդ սխալներից և առանձնացնել այն հիմնական դժվարությունները, որոնք ընդհանուր բնույթ են կրում ուսանողների մոտ:

ՊՈՐՏՖՈԼԻՈՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՆՐԱ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Դասընթացի պորտֆոլիոն դասընթացի ուսումնամեթոդական փաստաթղթերի համախումբ է, որով ներկայացվում է դասընթացի վարման ռազմավարությունը /ստրատեգիան/ և մարտավարությունը /տակտիկան/, պլանավորվում է դասընթացի ուսուցման արդյունավետ ու տրամաբանական կազմակերպումը, իրականացվում է դասընթացից դասավանդողի ու ուսումնառողի ձեռքբերումների գնահատումը, և կողմնորոշված է ոչ միայն ուսանողի գնահատմանը, այլ նաև նրա անհատական մասնագիտական աճի ապահովմանը: Փաստաթղթերը պորտֆոլիոյում ընդգրկվում են այն պահին, երբ դրանց անհրաժեշտությունը կա, և այդ նյութերը դարձել են մատչելի:

Պորտֆոլիոյի փաստաթղթերն ըստ իրենց բովանդակության և ժամանակագրության բաշխվում են երկու բաժիններում.

- **Բաժին 1.** Փաստաթղթեր, որոնք ներառվում են դասընթացը սկսվելուց առաջ:
- **Բաժին 2.** Փաստաթղթեր, որոնք ներառվում են դասընթացի իրականացման ընթացքում և դասընթացի ավարտից հետո:

1-ին բաժնի փաստաթղթերի առկայությունը վկայում է, որ դասավանդողը մանրամասնորեն պատրաստվել է դասընթացին, պլանավորել իր մասնագիտական գործունեությունն այդ դասընթացի շրջանակներում:

Դասընթացի փաթեթի (պորտֆոլիոյի) **2-րդ բաժինը** ամենաարժեքավոր հատվածն է և պարունակում է դասավանդողների և ուսանողների կառուցողական քննադատությունը: Այս բաժնի փաստաթղթերը ներառվում են դասընթացի իրականացման ընթացքում և ավարտից հետո, ընդգրկում են նրա մտորումները, որոշումները և խորհուրդները, ներկայացնում են դասավանդողի անդրադարձն է իր անցած ուղուն:

ԲԱԺԻՆ 1. ՆԱԽՔԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՍԿՍՎԵԼԸ ՀԱՎԱՔԱԳՐՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Այս բաժնի փաստաթղթերի առկայությունը վկայում է, որ դասավանդողը մանրամասնորեն պատրաստվել է դասընթացին, պլանավորել իր մասնագիտական գործունեությունն այդ դասընթացի շրջանակներում:

Այն ընդգրկում է հետևյալ փաստաթղթերը.

Փաթեթի տիտղոսաթերթ: Այն ներառում է դասընթացի անվանումը, ֆակուլտետը, մասնագիտությունը և կուրսը՝ որում այն դասավանդվելու է, կրեդիտների քանակը, փաթեթի ձևավորման տարեթիվը */Հավելված 1/:*

Տեղեկատվություն դասավանդողի մասին: Այն ներառում է դասավանդողի անձնական տվյալները, հեռախոսի համարը, էլեկտրոնային փոստի հասցեն, ուսանողների հետ աշխատելու և խորհրդատվության վայրը, օրերն ու ժամերը */Հավելված 2/:*

Տեղեկատվություն՝ պարտադիր և երաշխավորվող դասավանդման և ուսումնառության նյութերի վերաբերյալ: Այն պարունակում է դասագրքերի և այլ տպագիր նյութերի մանրամասն մատենագրությունն ըստ ընթերցանության համար **պարտադիր, լրացուցիչ և երաշխավորվող** ցանկերի՝ դրանց անվանումը, հեղինակը, հրատարակման տարեթիվը, հրատարակչությունը և որտեղից կարելի է ձեռք բերել */Հավելված 3/:* Պարունակում է տեղեկատվություն դասընթացի դասախոսությունների կամ դրանց սղագրերի, օժանդակ, բաշխիչ, դիդակտիկ, տեղեկատու նյութերի առկայության մասին (տպագիր կամ էլեկտրոնային), որոնք կարող են նաև ներառվել պորտֆոլիոյի մեջ:

Բացի այդ՝ ներառվում է նաև տեղեկատվություն գրադարանում դրանց առկայության և քանակի վերաբերյալ: Գրադարանում չլինելու դեպքում նշվում է այդ նյութերի ձեռքբերման անհրաժեշտության մասին և դասավանդողի քայլերն այդ ուղղությամբ: Լաբորատոր և իրականացման այլ առանձնահատկություններ ունեցող դասընթացների համար նշվում է.

- անհրաժեշտ լաբորատոր նյութերի ցանկը,
- անհրաժեշտ լաբորատոր սարքավորումների ցանկը (լաբորատորիայի անվտանգության սարքավորումներ, փորձարարական սարքեր և նյութեր, ցուցանմուշներ, գործիքներ և այլն),
- էլեկտրոնային միջոցների ցանկը (տեսահամալիր, համացանց, համակարգիչներ, տեսասարք, տպող սարք, պատճենահանման սարք, սկաներ),
- անհրաժեշտ համակարգչային ֆայլերը, ծրագրերը, էլեկտրոնային ուսումնամեթոդական նյութերը, տեսահոլովակները, տեսաերիզները, մուլտիմեդիա նյութերը (կամ դրանց ցանկը):

Դասընթացի ուսումնամեթոդական փաթեթը: Այն դասընթացի բովանդակային կազմակերպումն ապահովող հատուկ փաստաթղթերի համախումբ է և ներառում է հետևյալ բաժինները ***(Հավելված 4)***.

1) Դասընթացի վերաբերյալ մասնագիտական ամբիոնի երաշխավորությունը (**տես էջ 12**):

2) Դասընթացի <u>համառոտ նկարագիրը.</u> Այստեղ ներկայացվում են մասնագիտությունը, կրթական ծրագրի անունը, դասընթացի անվանումը, տեսակը (պարտադիր կամ կամընտրական), մակարդակը (բակալավր կամ մագիստրատուրա), ուսանողների թիրախային խումբը (կուրսը), անհրաժեշտ նախապայմանները (այն դասընթացները, որոնք ուսանողը պետք է ուսումնասիրած լինի մինչև տվյալ դասընթացը), ընդհանուր ժամաքանակը և դասախոսության, գործնական, սեմինար, լաբորատոր դասընթացների և ինքնուրույն աշխատանքների ժամային ծանրաբեռնվածությունը, կրեդիտների քանակը (**տես էջ 13**):

3) Դասընթացի <u>ներածությունը, նպատակներն ու խնդիրները.</u> **Ներածության** մեջ ներկայացվում է դասընթացի ուսումնասիրության անհրաժեշտությունը և նրա առանձնահատուկ դերը կրթական ծրագրի տեսանկյունից, նրա կապը մյուս դասընթացների հետ: **Դասընթացի նպատակը** այն մեկ հիմնական և կարևոր ձեռքբերումն է՝ գիտելիքը, կարողությունը կամ հմտությունը, որով դասախոսի տեսակետից կառանձնանա դասընթացը ուսումնասիրած ուսանողը այն դեռևս չուսումնասիրած ուսանողից: **Խնդիրները** պետք է ներկայացնեն այն ավելի փոքր ձեռքբերումները, որոնց միջոցով դասավանդողը պլանավորում է ուսանողներին ուղղորդել դեպի **դասընթացի նպատակը** (**տես էջ 14**):

4) Դասընթացի ավարտին <u>ակնկալվող վերջնարդյունքները</u>. Թվարկվում են դասընթացի ավարտին սպասվող կրթական վերջնարդյունքները: Դասընթացի կրթական վերջնարդյունքները նկարագրում են, թե ինչ պետք է կարողանա անել ուսանողը դասընթացի հաջող ավարտին՝ իր գետիքը և իմացությունը, կարողությունները և հմտությունները դրսևորելու համար: Դասընթացի կրթական վերջնարդյունքները պետք է ձևակերպել այնպես, որ նրանք պարզորոշ ցույց տան, թե ուսանողը հատկապես ինչպես է **<u>դրսևորելու</u>** իր իմանալը, հասկանալը և կարողանալը: Դրանք պետք է ձևակերպվեն ուսանողներին հասկանալի տերմիններով, իսկ ուսանողների կողմից դրանց ձեռքբերումը հնարավոր լինի **<u>դիտարկել, չափել և արժանահավատորեն գնահատել</u>**, այսինքն լինեն իրատեսական և չափելի[1]: Կրթական վերջնարդյունքները ձևակերպելիս օգտվել իմացության ձևերի դասակարգման Բլումի տաքսոնոմիայից[2]:

Դասընթացի կրթական վերջնարդյունքները թվարկելիս համարակալվում են համապատասխան վերջնարդյունքի սկզբնատառով՝ մասնագիտական գիտելիք և իմացություն՝ Գ, գործնական մասնագիտական կարողություն՝ Կ, ընդհանրական և փոխանցելի կարողություն՝ Ը և հերթական համարով (օրինակ՝ Գ1, Կ2, Ը3) (**տես էջ 15**):

5) Դասընթացի <u>դասավանդման և ուսումնառության մեթոդները.</u> Նկարագրվում են դասընթացի իրականացման և կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանն ուղղված դասավանդման և ուսումնառության մեթոդները, որոնք պետք է լավագույնս նպաստեն վերջնարդյունքների ձեռքբերմանը, հաշվի առնեն ուսանողների գիտելիքների և ընդունակությունների տարբեր մակարդակները և լինեն բազմաձև, խրախուսեն ուսանողների ակտիվությունը, ինքնուրույնությունը և տրամադրեն խմբային աշխատանքի

[1] Արդյունահեն դասընթացների և կրթական ծրագրերի մշակում (Դասախոսի ձեռնարկ), Ա.Բուդաղյան, Ա.Գրիգորյան, Երևան, 2017, էջ 35

[2] Արդյունահեն դասընթացների և կրթական ծրագրերի մշակում (Դասախոսի ձեռնարկ), Ա.Բուդաղյան, Ա.Գրիգորյան, Երևան, 2017, էջ 43

հնարավորություններ՝ որտեղ այն հնարավոր է[3]: **Դասավանդման մեթոդը** ներառում է ուսանողի ուսուցման գործընթացի խթանմանն ուղղված դասավանդողների կողմից օգտագործվող սկզբունքները և մեթոդները: **Ուսումնառության մեթոդը** փոխներգործուն գործընթաց է դասավանդողի և ուսանողի միջև, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի, հմտությունների և կարողությունների փոխանցում, ընկալում ու յուրացում՝ նախատեսված ուսումնառության բովանդակությամբ: Դրանք պետք է խրախուսեն ուսանողների ստեղծագործ միտքը, լինեն ուսանողակենտրոն, նպաստեն նրանց ինքնուրույն աշխատելու կարողությունների զարգացմանը (**տես էջ 17**):

6) Դասընթացի <u>գնահատման չափանիշները, գործիքները և ընթացակարգը.</u> Գնահատումը ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրիչ է: Արդյունավետ գնահատումը ենթադրում է գնահատման մեթոդների բազմազանություն՝ ուսանողի գիտելիքների մակարդակն արժանահավատորեն որոշելու համար: Չափանիշների վրա հիմնված գնահատումը դրանք սկզբունքներ են, որոնց իրականացումն ապահովում է գնահատման մեթոդների համապատասխանեցումը դասընթացի ելքային արդյունքներին, ներառում է դասավանդման, ուսումնառության և գնահատման շարունակական բարելավման մեխանիզմներ, ուղղորդում և խրախուսում է ուսանողի ուսումնառությունը[4]:

Այստեղ պետք է ներկայացնել, թե տարբեր ելքային արդյունքների համար գնահատման ի՞նչ մեթոդներ և գործիքներ են կիրառվում (այսինքն, ինչպե՞ս է դասավանդողը համոզվելու, որ դասընթացի ելքային արդյունքները ուսանողների կողմից ձեռք են բերվել): Ներկայացվում են ***գնահատման գործիքները*** (օրինակ՝ քննական տոմս, թեստ, ստուգողական աշխատանք, թելադրություն, բառային աշխատանք, թարգմանություն, տնային առաջադրանք, անհատական տնային առաջադրանք, ինքնուրույն աշխատանք, ռեֆերատ, զեկուցում և այլն), որոնց համախումբը թույլ է տալու գնահատել դասընթացի յուրաքանչյուր կրթական վերջնարդյունք:

Պետք է ներկայացնել ուսանողի գնահատման չափանիշները, այսինքն ինչպե՞ս է չափելու վերջնարդյունքների ձեռքբերման չափը կամ մակարդակը: Այսինքն, կրթական վերջնարդյունքների ***գնահատման չափանիշներով պետք է*** նկարագրել, թե ինչի՞ն ունակ պետք է լինի ուսանողը դրանց գերազանց (100%), լավ (75%), բավարար (50%) յուրացման ցուցադրման համար /անբավարար՝ բավարարից ցածր մակարդակի դեպքում/:

Ընթացակարգում ներկայացվում է ստուգման, ամփոփման կամ գնահատման հստակ ձևերը, դրանց իրականացման ժամկետները, կազմակերպման մանրամասնությունները՝ անհրաժեշտության դեպքում (**տես էջ 16**)[5]:

7) Դասընթացի <u>կրթական վերջնարդյունքների ձևավորման քարտեզը</u> (թեմաների կրթական վերջնարդյունքների միջոցով դասընթացի կրթական վերջնարդյունքների ապահովման աղյուսակը) (**տես էջ 18**): Այն կարևորագույն փաստաթուղթ է, որն ակնառու կերպով ցույց է տալիս, թե ինչպես է թեմաների միջոցով իրականացվում դասընթացի ակնկալ-վող կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը և ինչպես են վերջիններս շաղկապված դասընթացի բաղկացուցիչ մաս հանդիսացող թեմաների հետ:

---

[3] Արդյունահեն դասընթացների և կրթական ծրագրերի մշակում (Դասախոսի ձեռնարկ), Ա.Բուդաղյան, Ա.Գրիգորյան, Երևան, 2017, էջ 167

[4] Արդյունահեն դասընթացների և կրթական ծրագրերի մշակում (Դասախոսի ձեռնարկ), Ա.Բուդաղյան, Ա.Գրիգորյան, Երևան, 2017, էջ 184

[5] Տես հավելված 5

Քարտեզում ուղղահայաց սյունակներում դասավորված են դասընթացի կրթական վերջնարդյունքները (ըստ համապատասխան դասակարգման), իսկ հորիզոնական տողերում՝ դասընթացի թեմաները (ենթաթեմաները)։ Յուրաքանչյուր կրթական վերջնարդյունքի և այն էականորեն ձևավորող թեմայի (թեմաների, որոնցում գնահատվում է այդ վերջնարդյունքների ձեռքբերումը) հատման վանդակում դրվում է « √ » կամ « X » նշանը՝ դրանք շաղկապելով միմյանց հետ։ Լրացված քարտեզը պատկերավոր կերպով ցույց է տալիս կապերի առկայությունը դասընթացի թեմատիկ պլանում։

8) Դասընթացի <u>թեմատիկ պլանը։</u> Ներկայացնում է թեմաների ժամային բաշխվածությունն ըստ պարապմունքների տիպերի և դասընթացի հաջող ավարտին ուսանողի կողմից ձեռք բերվելիք կրթական վերջնարդյունքները (**տես էջ 19**)։

9) Դասընթացի <u>օրացուցային պլանը։</u> Ներկայացնում է դասավանդվող նյութի բաշխվածությունն ըստ դասաժամերի, ընթացիկ ամփոփման կամ գնահատման ժամկետները և ձևերը (ընթացիկ ստուգում կամ քննություն, եզրափակիչ կամ առանց եզրափակիչ գնահատում, հանրագումարային քննություն, ստուգողական աշխատանք, թեստ, տնային առաջադրանք, բանավոր հարցում, զեկուցում, ռեֆերատ, ինքնուրույն աշխատանք և այլն) (**տես էջ 20**)։

10) Դասընթացի <u>գնահատման գործիքների նմուշները։</u> Ներառվում են ուսանողների ձեռքբերումների ստուգման և գնահատման տարբեր ձևերի համար խնդիրների, լսարանային գործնական, սեմինար, լաբորատոր և ինքնուրույն աշխատանքների տիպային առաջադրանքների օրինակելի նմուշները, քննական հարցաշարերը և այլն։ Ինքնուրույն, ստեղծագործական և հետազոտական աշխատանքների համար կարելի է ներառել դրանց իրականացման պահանջները և մեթոդական ցուցումները, որոնք վերաբերում են նյութի բովանդակությանը, տեղեկույթի որոնման, կուտակման, դասակարգման և մշակման աշխատանքներին, ինքնուրույն ստեղծագործական աշխատանքներին, ուսանողական զեկուցումների և ռեֆերատների պատրաստմանը։

11) Դասընթացի <u>որակի գնահատման գործիքները</u>։ Ներառում է դասընթացի կամ նրա առանձին բաժինների իրականացման արդյունավետությունը գնահատելու հարցաթերթերը, մասնավորապես դասընթացի սկզբին և ավարտին կարելի է անցկացնել դիագնոստիկ հարցում՝ ուսանողի առաջընթացը ներկայացնելու համար, իսկ դասընթացի ավարտին կատարել դասընթացի արդյունավետության գնահատում /***Հավելված 6***/։

Հավելված 1. Փաթեթի տիտղոսաթերթ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂ

_____

(դասընթացի անվանումը ըստ ուսումնական պլանի)

Դ Ա Ս Ը Ն Թ Ա Ց Ի Փ Ա Թ Ե Թ

Ֆակուլտետ _____

Մասնագիտություն _____

_____

Կուրս _____

ECTS կրեդիտների քանակը _____

Դասընթացի մակարդակը _____

ԻՋԵՎԱՆ – 2019

Հավելված 2. Տեղեկատվություն դասավանդողի մասին

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՓԱԹԵԹԸ ԿԱԶՄԵՑ

Դասախոսի ԱԱՀ _____

Գիտական աստիճանը _____

Կոչումը _____

Ամբիոնի անունը _____

Պաշտոնը _____

Տեղեկատվություն ուսանողների հետ հետադարձ կապի համար

Աշխատանքային հեռախոսներ _____

Բջջային հեռախոսներ _____

Էլեկտրոնային փոստ _____

Խորհրդատվության վայրը՝ _____

Օրերը և ժամերը՝

Թիվ	Ամիս	Շաբաթվա օր կամ ամսաթիվ	Ժամերը

Հավելված 3. Տեղեկատվություն պարտադիր և երաշխավորվող դասավանդման և ուսումնառության նյութերի վերաբերյալ

1. Դասագրքեր և այլ տպագիր նյութեր

Թիվ	ՀԵՂԻՆԱԿ (ՆԵՐ)	ՎԵՐՆԱԳԻՐ	ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒ-ԹՅՈՒՆ	ՎԱՅՐ	ՏԱՐԵԹԻՎ	ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ		
						օրինակների քանակը	որտեղից կարելի է ձեռք բերել	կա ձեռք բերելու անհրաժշտություն
Պարտադիր								
1.								
Լրացուցիչ կամ երաշխավորվող								
1.								

2. Այլ ուսումնական նյութեր

	Ուսումնական նյութի տեսակը	Առկայությունը (նշել + նշանով)			
		գրադարանում	Մասնաճյուղի կայքում	Պորտֆոլիոյում (նշել էջը)	ամբիոնում
1.	Դասախոսություններ				
2.	Դասախոսությունների սղագրեր				
3.	Դիդակտիկ նյութեր				
4.	Բաշխիչ նյութեր				
	Այլ				

3. Լաբորատոր և իրականացման այլ առանձնահատկություններ ունեցող դասընթացների համար անհրաժեշտ նյութեր

Թիվ	ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԿԱՄ ՆՅՈՒԹԻ ԱՆՈՒՆԸ	Չափման միավորը	Քանակը	ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅՈՒՄ ԿԱՄ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ		
				քանակը	որտեղից կարելի է ձեռք բերել	կա ձեռք բերելու անհրաժշտություն

Հավելված 4. Դասընթացի ուսումնամեթոդական փաթեթը

1. Մասնագիտական ամբիոնի երաշխավորությունը

Հաստատված է

_____

_____

Քննարկված է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի

_____

(ամբիոնի անունը)

ամբիոնի 201- թ. _____ թիվ ____ նիստում:

Ամբիոնի վարիչ՝ _____

(գիտական աստիճանը, պաշտոնը, ազգանուն, անուն, հայրանունը)

_____

(ստորագրություն)

Կազմեց՝ _____

(Դասավանդողի գիտական աստիճանը, պաշտոնը, ազգանուն, անուն, հայրանունը)

_____

(ստորագրություն)

2. Դասընթացի համառոտ նկարագիրը

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Մասնագիտությունը՝

Կրթական ծրագիրը՝

Դասընթացի անվանումը՝

Դասընթացի տեսակը՝

Դասընթացի մակարդակը՝

Ուսանողների թիրախային խումբը՝

Անհրաժեշտ նախապայմաններ՝ թվարկել

ECTS կրեդիտների քանակը՝ ___ ECTS կրեդիտ

Ընդհանուր ժամաքանակը՝ **–ժամ**

Դասախոսություն՝ – ժամ

Գործնական՝ –ժամ

Սեմինար՝ – ժամ

Լաբորատոր՝ – ժամ

Ինքնուրույն՝ –ժամ

3. Դասընթացի ներածությունը, նպատակներն ու խնդիրները

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

_____

_____

_____

_____

Դասընթացի նպատակը

_____

_____

_____

Դասընթացի խնդիրները

1. _____
2. _____
3. _____

4. Դասընթացի ավարտին ակնկալվող վերջնարդյունքները

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի.

Մասնագիտական գիտելիք և իմացություն՝

Գ1. _____

_____

Գ2. _____

_____

Գ3. _____

_____

Գործնական մասնագիտական կարողություններ՝

Կ1. _____

_____

Կ2. _____

_____

Կ3. _____

_____

Ընդհանրական/փոխանցելի կարողություններ՝

Ը1. _____

_____

Ը2. _____

_____

Ը3. _____

_____

5. Դասընթացի գնահատման չափանիշները, գործիքները և ընթացակարգերը

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Գնահատման ընդհանուր ռազմավարությունը. _____

_____

_____

Գնահատման մեթոդները, չափանիշները, գործիքները.

Թիվ	Գնահատման մեթոդը	Գնահատման գործիքը
Գ1		
Գ2		
Գ3		
Կ1		
Կ2		
Կ3		
Ը1		
Ը2		
Ը3		

Գնահատման չափանիշները _____

_____

_____

Գնահատման ընթացակարգը _____

_____

_____

_____

6. Դասընթացի դասավանդման և ուսումնառության ձևերն ու մեթոդները

Կիրառվում են դասավանդման հետևյալ մեթոդները.

_____

_____

Կիրառվում են ուսումնառության հետևյալ մեթոդները.

_____

_____

7. Կրթական վերջնարդյունքների ձևավորման քարտեզը

Թիվ	Թեմայի/ենթաթեմայի վերնագիրը	Կոմպետենցիայի համառոտ անունը								
		Գ1	Գ2	Գ3	Կ1	Կ2	Կ3	Հ1	Հ2	Հ3
1										
2										
3										
4										

8. Դասընթացի թեմատիկ պլանը

Թիվ	Թեմայի վերնագիրը և նրա ուսուցման ավարտին ակնկալվող վերջնարդյունքները	Պարապմունքի տիպը/ժամաքանակը					
		դասախոսություն	Սեմինար պարապմունք	Գործնական պարապմունք	Լաբորատոր պարապմունքներ	Ինքնուրույն աշխատանք	Ընդամենը
1.	Թեմայի վերնագիրը. _____ Թեմայի ավարտին ուսանողը ունակ կլինի. *Մասնագիտական գիտելիք և իմացություն* ' _____ _____ *Գործնական մասնագիտական կարողություններ* ' _____ _____ *Ընդհանրական/փոխանցելի կարողություններ* ' _____ _____						
2.							
Ընդամենը							

9. Դասընթացի օրացուցային պլանը /ըստ պարապմունքի տիպերի/

Թիվ	Դասի տիպը և նրա հ/հ	Դասաժամի թեմատիկան կամ թեմատիկ բաղադրիչները	Ամփոփման ձևը
Թեմա 1.			
1.	Դասախ.1		
2.	Գործն. 1		
3.	Դասախ.2		
4.	Սեմ.1		
Թեմա 2.			

10. Դասընթացի գնահատման գործիքների նմուշները

Հավելված 5. Նախագիծ

Դասընթացի գնահատման սկզբունքները

(գնահատում ըստ ուսումնառության արդյունքների)[6]

Պահպանելով մասնաճյուղում գործող գնահատման համակարգի ընդհանուր կառուցվածքը՝ առաջարկվում է դասընթացի գնահատման երեք նախագծեր՝ եզրափակիչ գնահատումով, առանց եզրափակիչ գնահատման և ստուգարքով գնահատման դասընթացների գնահատման համար, որոնցում արտացոլվում են կիսամյակի ընթացքում ուսանողի կողմից ձեռքբերված ուսումնառության արդյունքները:

<u>Եզրափակիչ գնահատումով դասընթացի</u> գնահատման համար առաջարկվում է մասնաբաժինների տրոհման հետևյալ տարբերակը */Գծապատկեր 1/*:

Ընթացիկ քննությունների 5 միավորը կարելի է տրոհել է 4+1 սկզբունքով, որտեղ մաքսիմալ 4 <u>միավորը</u> ուսանողը վաստակում է ընթացիկ քննությունից (գրավոր, բանավոր կամ թեստային տարբերակով՝ ելնելով դասընթացի առանձնահատկություններից) և մաքսիմալ <u>1 միավորը</u>՝ գործնական, սեմինար և լաբորատոր դասընթացներից՝ ըստ ընթացիկ քննաշրջանում ուսանողի վաստակած միջին գնահատականի (օրինակ՝ 5-ի դեպքում 1, 4-ի դեպքում 0,75, 3-ի դեպքում՝ 0,5):

Եզրափակիչ գնահատման 10 միավորը կարելի է տրոհել 2+1+7 սկզբունքով, որտեղ մաքսիմալ 7 <u>միավորումը</u> ուսանողը վաստակում է բանավոր անցկացվող քննությունից, մաքսիմալ 2 <u>միավորը</u>՝ կիսամյակի ընթացքում ուսանողի կատարած ինքնուրույն աշխատանքի իրականացման մակարդակին համապատասխան՝ դասախոսի հայեցողությամբ (օրինակ՝ 2 միավորը կարող է ձևավորվել է հետևյալ կոմպոնենտներով.

- անհատական թեմատիկ առաջադրանք ,
- տարբեր աղբյուրներից թեմայի շրջանակներում տեղեկատվության հայթայթում և համակարգում,
- տրված առաջադրանքի սահմաններում թեմատիկ վերլուծություն):

Մաքսիմալ <u>1 միավորը</u>՝ ուսանողի ընդհանրական կարողությունների դրսևորման համար (օրինակ՝ կազմակերպված ու մասնագիտորեն հմուտ և գրագետ բանավոր խոսք):

<u>Առանց եզրափակիչ գնահատման դասընթացից</u> գնահատման համար առաջարկվել է մասնաբաժինների տրոհման հետևյալ տարբերակը */Գծապատկեր 2/*:

Ընթացիկ ստուգման 10 միավորը կարելի է տրոհել 1+3+1+5 սկզբունքով, որտեղ <u>մաքսիմալ 1 միավորը</u> ուսանողը վաստակում է գործնական, սեմինար և լաբորատոր դասընթացներից՝ ըստ ընթացիկ քննաշրջանում ուսանողի վաստակած միջին գնահատականի (5-ի դեպքում 1, 4-ի դեպքում 0,75, 3-ի դեպքում՝ 0,5), <u>մաքսիմալ 3 միավորը</u>՝ կիսամյակի ընթացքում ուսանողի կատարած ինքնուրույն աշխատանքի իրականացման մակարդակին համապատասխան, <u>մաքսիմալ 1 միավորը</u>՝ ուսանողի ընդհանրական կարողությունների դրսևորման համար, և <u>մաքսիմալ 5 միավորը</u>՝ գրավոր կամ բանավոր ստուգման միջոցով մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման համար:

<u>Ստուգարքով</u> ավարտվող դասընթացից ուսանողը ստանում է “ստուգված”, եթե հաղթահարում է դասընթացի ենթաբաժինները */Գծապատկեր 3/*: Դասընթացը դասախոսի

[6] Ուղեցույց ուսանողների ձեռքբերումների գնահատման պլանավորման համար

հայեցողությամբ կարող է տրոհվել հաշվետու ենթաբաժինների (օրինակ՝ 4 ենթաբաժինների): Յուրաքանչյուր ենթաբաժնի շրջանակներում իրականացվում է ուսանողների գիտելիքների թեստային գնահատում (նաև օնլայն տարբերակի կիրառմամբ) և կարողությունների ու հմտությունների գնահատում՝ ինքնուրույն աշխատանքների միջոցով: Բոլոր ենթաբաժիններից 50% և ավելի առաջադիմություն ցուցաբերած ուսանողը մեխանիկորեն ստանում է «Ստուգված», մյուսներին դասընթացի ավարտին ստուգարքի ժամանակ տրվում են հարցեր այն թեմաներից, որոնց համար ուսանողը ցուցաբերել է 50%-ից ցածր առաջադիմություն:

Գծապատկեր 1. Եզրափակիչ գնահատումով դասընթացի գնահատումը



$$Գարդ.=Քընթ.1+Քընթ.2+Քեզր.քնն.$$

Գծապատկեր 2. Առանց եզրափակիչ գնահատման դասընթացի գնահատումը



Գծապատկեր 3. Ստուգարքով ավարտվող դասընթացի գնահատումը



Հավելված 6. Դասընթացի գնահատման հարցաթերթ

Դասընթացի որակի վերաբերյալ

ուսանողի կարծիքի ուսումնասիրության հարցաթերթ

Հարգելի՛ ուսանող, դասընթացի գնահատման հարցումն անանուն է: Մենք կարևորում ենք Ձեր կարծիքը, խնդրում ենք ուշադիր կարդալ, մտածել դասընթացից Ձեր ձեռքբերումների և բացթողումների մասին և անկեղծ պատասխանել հարցերին ու ներկայացնել Ձեր նկատառումները: Ձեր օբյեկտիվ, անկաշկանդ պատասխանները կօգնեն դասախոսին գնահատել դասընթացի արդյունավետությունը, ապա վերանայել դասընթացի ծրագիրը, կիրառած դասավանդման և ուսումնառության մեթոդներն ու օգտագործած ուսումնական նյութերը՝ դասընթացի հաջորդ իրականացումն առավել արդյունավետ դարձնելու համար:

Գնահատեք յուրաքանչյուր հարցը 0-ից 5 միավորներով, որտեղ 5-ը՝ **միանշանակ այո**, 4-ը՝ **հիմնականում այո**, 3-ը՝ **ոչ այո, ոչ էլ ոչ**, 2-ը՝ **հիմնականում ոչ**, 1-ը՝ **միանշանակ ոչ**, 0-ն՝ **դժվարանում եմ պատասխանել**:

Ուշադրություն. Հարցը չգնահատելը, այսինքն դատարկ վանդակը, կնշանակի, որ տվյալ գործընթացը չի իրականացվել:

Դասընթացի անվանումը՝ _____ Ամսաթիվ _____

Հարցերի բովանդակությունը		*Գնահ.*
Դասընթացի բովանդակությունը		
1.	Դասընթացի թեմաները տրամաբանորեն փոխկապակցված են:	
2.	Դասընթացի թեմատիկան ուղղորդում է ուսումնասիրել մասնագիտության ժամանակակից խնդիրները:	
3.	Դասընթացի թեմատիկան մղում է ինքնուրույն աշխատելու և սեփական տեսակետներ ձևավորելու:	
4.	Դասընթացը նպաստում է մասնագիտական առաջընթացին:	
	Ուսումնառության հնարավորությունները և ռեսուրսները	
5.	Դասընթացը յուրացման համար մատչելի է:	
6.	Դասընթացը սովորեցնում է աշխատել մասնագիտական գրականության հետ:	
7.	Դասընթացը սովորեցնում է աշխատել մասնագիտական տվյալների հետ և կատարել դատողություններ:	
8.	Դասընթացը մղում է քննարկումներ անել նաև լսարանից դուրս:	
9.	Դասընթացը հնարավորություն է տալիս իրար կապել տարբեր դասընթացներից ձեռք բերած տեղեկությունները:	
	Ուսումնառության նպատակների հասանելիության աստիճանը	
10.	Դասընթացն արդարացրեց իմ ակնկալիքները:	
11.	Դասընթացը սովորեցրեց գնահատել ձեռքբերումները:	
12.	Դասընթացն ընդհանուր առմամբ հետաքրքիր է:	
13.	Դասընթացից ձեռք բերումներն ինձ հնարավորություն են տալիս հաղորդակցվել մասնագիտական միջավայրում:	

1. Այս դասընթացում հատկապես ի՞նչն էր ըստ ձեզ ամենահետաքրքիրը:

_____

_____

2. Դասընթացը հնարավորություն տվե՞ց տեսնել Ձեր ձեռքբերումների կապը ապագա մասնագիտական աշխատանքի հետ:

_____

_____

3. Որքանո՞վ էր Ձեզ համար արդյունավետ այս դասընթացը։

ա)Շատ արդյունավետ էր բ)միջին արդյունավետության էր գ)արդյունավետ չէր

4. Ի՞նչ եք առաջարկում հաջորդ ուստարում դասընթացն առավել արդյունավետ դարձնելու համար։

_____

_____

_____

5. Ըստ Ձեզ, այս հարցաշարը գնահատու՞մ է դասընթացի արդյունավետությունը (այո կամ ոչ)։

_____

Եթե ոչ, ապա ի՞նչ հարցեր կդնեիք դրա համար։

_____

_____

_____

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար